Բենտեն – ընտանիք եւ պտղաբերութիւն, Ֆուկուրօկուժու – երկարակեցութիւն, Ժիրուժին – տաղանդ, Յօտեյ – բարեկեցութիւն, Բիզժամեն – փառք:

Հետաքրքիր են նոյնպէս որոտի եւ քամու աստուածները: Վերջինս քամիներով լիքը տոպրակը դրած է շալակին ու պինդ պահում է բերանը, իսկ որոտի աստուածը պղնձի ձողերով խփում է պղնձի թմբուկներին: Երկուսի դէմքն էլ սարսափելի է, մի հազւագիւտ երեւոյթ, քանի որ ճապոնական աստուածները խիստ բարի ու մեղմ դէմք ունեն ընդհանրապէս:

Իսկ չար դեւերին ներկայացնում են պոզերով, գզգզւած մօրուքով, որ իհարկէ միայն երեխաներին է վախեցնում:

Որքան էլ բազմաթիւ լինեն այդ աստուածները, անկարելի է ճապոնացիներին կոպիտ հեթանոս համարել: Այդ աստուածների արձանները իմ վրաս ճիշտ նոյն տպաւորութիւնն էին անում, ինչ որ Աստուածածնի ու սրբերի արձանները կաթոլիկ եկեղեցիներում: Դրանք նոյն սիմբօլներն են եւ ոչ կուռք: Սրանք էլ նոյնպէս կանգնեցրած են տաճարների պատերի մէջ եւ յաճախ նոյնպէս զարդարւած նոյն լուսապսակներով:

⁂

Ճապոնի հասարակ ժողովուրդը շատ է սիրում ուխտ գնալ իր սրբավայրերին:

Գիւղերում բազմաթիւ կրօնական ընկերութիւններ կան, որոնց անդամները որոշ վճար են տալիս. դաշտային աշխատանքից ազատ եղած ժամանակ նրանք ամեն տարի այդ փողով ուղարկում են իրանց միջից ընտրած մի խումբ, սրբավայրերն այցելելու համար:

Ճապոնացին ոտով շրջել շատ է սիրում, եւ այդ